



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆՎՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԱՆԻ» ՊԱՐԱՅԻՆ ՄԻԱՄՈՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Ուրբաթ, 31 Յոկտեմբերի առաոստուն, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Համազգայինի «Անի» Պարային Միաւորի Վարչական կազմի ներկայացուցիչներուն: Պատուիրակութեան մաս կը կազմէին «Անի» Պարային Միաւորի գեղարուեստական ղեկավարներ՝ Սիւզի Բարսեղեան-Դարբինեան եւ Եղիա Հաշոյեան, Վարչութեան ատենապետ Մարգար Մարտիրոսեան, փոխ-ատենապետ Միսաք Թերզեան եւ ատենադպրուհի Մարալ Պէքերեան: Հանդիպումին ներկայ էր նաեւ Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներէն Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան:

Պատուիրակութիւնը նախ Առաջնորդ Սրբազանը շնորհաւորեց իր վերընտրութեան առիթով, ու խօսեցաւ «Անի» Պարային Միաւորի յառաջիկայ ծրագիրներուն մասին, գլխաւորաբար յիշելով՝ որ յառաջիկայ տարի խումբը կը բոլորէ իր կազմութեան 35 ամեակը, որուն տօնակատարութիւնը կը ծրագրուի նշել 2009 թուականի Յոկտեմբերին: Պատուիրակութիւնը կազմակերպուելիք ձեռնարկներուն հրաւիրեց Առաջնորդ Սրբազանը, նշելով՝ որ իր ներկայութիւնը մեծ պատիւ կը բերէ:

Առաջնորդ Սրբազանը մեծապէս գնահատեց Համազգայինի «Անի» Պարային Միաւորի տարած ազգանուէր եւ սերնդակերտ առաքելութիւնը եւ օրհնեց անոնց յառաջիկայ բոլոր ձեռնարկները, խոստանալով, ինչպէս միշտ՝ նաեւ այդ միջոցառումներուն ներկայ ըլլալ:

Հանդիպումի աւարտին, տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանակում:

PRELATE WELCOMES HAMAZKAYIN ANI DANCE COMPANY COMMITTEE MEMBERS

On the morning of Friday, October 31st, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy Hamazkayin ANI Dance Company Committee members. The delegation consisted of artistic directors Mrs. Suzy Barseghian-Tarpinian and Mr. Yeghia Hasholian, Chairman Mr.

Markar Mardirossian, Vice-Chairman Mr. Missak Terzian, and Secretary Mrs. Maral Bekerian. Christian Education Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian also attended the meeting.

The meeting began with the delegation congratulating the Prelate on his re-election, following which they spoke of their future activities including the 35th anniversary of the dance company which they will celebrate next October. The members also extended an invitation to the Prelate for their upcoming events.

The Prelate commended the efforts of the ANI Dance Company in preserving and enhancing our culture and traditions and conveyed his wishes of success for all their future endeavors, expressing hope that he would be able to attend their upcoming events.

The meeting concluded with the exchange of mementos.